# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՆՆ ֆուդ ՍՊԸ-ն ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/01 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 30 | `գյուղմթերք | գյուղմթերք | գյուղմթերք | արտադրողը գյուղացի | ԳՕՍՏ 1724-85 կամ համարժեք, Կաղամբ 45% -վաղահաս, 55%-միջահաս: Թարմ գլուխ կաղամբ` մթերման համար, Արտաքին տեսքը` գլուխները թարմ, ամբողջական, մաքուր, առողջ, լիովին ձևավորված, առանց հիվանդությունների և վնասվածքների, չծլած, տվյալ բուսաբանական տեսակին բնորոշ գույնով. ձևով ու համ ու հոտով, առանց կողմնակի հոտի և համի: Կաղամբի գլուխները չպետք է լինեն գյուղատնտեսական վնասատուներով վնասված, չպետք է ունենան ավելորդ արտաքին |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | խոնավություն, պետք է լինեն ամուր, խիտ, բայց ոչ փխրուն և ոչ լխկած: Գլուխների մաքրման աստիճանը` կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն մինչև մակերևույթը ամուր գրկող կանաչ և սպիտակ տերևները, թույլատրվում է կաղամբի մակերևույթը ամուր չգրկող 2-4 հատ կանաչ տերևների առկայություն: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչ ավելի: Կաղամբի մաքրված գլուխների քաշը ոչ պակաս`1-1,5 կգ/վաղահաս/, առնվազն 2կգ/միջահաս/: 3 սմ-ից ավելի խորությամբ մեխանիկական վնասվածքներով, ճաքերով, նեխած, գյուղատնտեսական վնասատուներով վնասված, ցրտահարված, շոգեհարված` միջուկի դեղնվածության և կարմրածության նշաններով գլուխների առկայություն չի թույլատրվում: Չի թույլատրվում նշահատված գլուխներով և կաղամբակոթերով կաղամբի առկայություն: Մատակարամած սննդատեսակի առնվազն 90 տոկոսում գերակշռի վերը նշված հատկանիշները: Անվտանգությունը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | և փաթեթավորումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի,<<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի ։ Մատակարարումն իրականացվում է առնվազն շաբաթական մեկ անգամ՝ ոչ շուտ քան 8:30-ից մինչև ոչ ուշ քան 16:30-ը: Մթերքի մատակարարման դեպքում տեխնիկական բնութագրին կամ մատակարարման պայմաններին անհամապատասխանություն ի հայտ գալու դեպքում անհամապատասխանության շտկման ժամկետ է սահմանվում 1 օր: Մատակարարման կոնկրետ օրը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ շուտ քան 3 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով` էլ. փոստով կամ հեռախոսազանգով: Մատակարարումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին` մանկապարտեզի նշված հասցեով *ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի «Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի տրամադրման կարգը և սանիտարական անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 85-Ն հրամանով հաստատված սննդամթերքի տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցներով: Յուրաքանչյուր ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից, հաշվի առնելով տարվա ընթացքում մանկապարտեզ հաճախող երեխաների փաստացի թվաքանակը և ֆինանսավորումը կիրականացվի փաստացի մատակարարված ապրանքի մասով: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ՆՆ փուդ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/01 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 30 | | | | | |